Իբրև Ս. Հոգու նշանակ հնագոյն օրինակն ունինք կատակոմբաների մէջ Բ. դարից, իսկ Դ–Ե. դարերում սարկոֆագների և փղոսկրի դիպտիխների վերայ(1) մկրտութեան հետ կապուած, ինչպէս և մեզանում Օձունի գերեզմանական նշանաւոր կոթողի մկրտութեան տեսարանի մէջ, ոչ ուշ քան Զ. դարի առաջին կէսը։ Թալինի գերեզմանական մի ուրիշ կոթողի վերայ մկրտուող Յիսուսի գլխին իջնում է աղաւնին՝ կոցին պսակ բռնած (պատկ. 28), դարձեալ ոչ ուշ քան Զ. դարը։ Բայց այդ միակ երևոյթը չէր. Վրթանէս Քերթող Աղուանից գրած թղթի մէջ բողոքում է այդպիսի հասկացողութեան դէմ, համարելով այդ ոչ համապատասխան Քրիստոսի աստուածութեան գաղափարին, այլ նեստորական. «Իսկ զ Հոգւոյն սրբոյ պսակ բերել, զայդ ոչ ուստեք լուայ յԱստուածաշունչ գրոց յեկեղեցւոջ ... ո՞ւմ բերէ պսակ, քանզի պսակ յանարգութենէ ճոխացելոյ բերի եւ զոչ պատուեալն ի պատիւ հասուցանելոյ, այլ ոչ այդպէս ...»(1)։



Պատկեր 28

Աբարանի Ափնայ գիւղի բազիլիկ եկեղեցու դրան ճակատաքարը, ոչ ուշ քան Զ. դար.

Ս. Հոգին աղաւնու կերպարանքով երևան է գալիս Հոգեգալստեան և էջիմացիայի պատկերագրութեան մէջ, որոնցից, սակայն, շատ հին օրինակներ յայտնի չեն, եթէ չհաշուենք Բաբուլայի Հոգեգալստեան մանրանկարը(2)։ Իբրև աւետարանիչների նշանակներ ձեռագիրների մէջ կըրկնուում յաճախ Ը. դարից սկսած, որ երբեմն արտայայտուում է նաև Տիրոջ օրհնող աջով(3)։

(1) Kaufman. 367. 371. 356։

(1) Արարատ. 1896. 481։ Պսակ է դնում Աստուածածնի գլխին երկնրից սաւառնող հրեշտակը գերեզմանական կոթողի մի բանդակում, ոչ ուշ քան Զ. դարը որ գտնուում էր Ուջանի եւ Ադցի մէջ՝ Հաջի-Բայրամ գիւղում. այժմ Էջմիածնի պետական թանգարանը բերուած Սենեքերիմ Տէր Յակոբեանի ձեռքով։

(2) Kondakow. Istoria Bisantijskawo Iskusstwa. 74. 180 եւն։ Kurnitschnikow. K Ikonographii soschestwia swiataro Ducha. Drewkosmu. Frudi Mosk. Arch. Odschestwa. XV. wipysk. II. Beissel. Gesch. der Evang. Bücher. 64։

(3) Beissel. 104. 292. 49։ Մեզանում Օրթաքիլիսայի աւետարանի մէջ 1166 թուականից. Հռոմկլայի դպրոցի գործ։